ԼՈՒՐԵՐ ԹԵՄԵՐԻՑ

ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄ

Հունիսի 10-ից Գուգարաց թեմի առաջնորդական իր ծառայությունն սկսեց Հոգեշնորհ Տ. Սեպուհ վրդ. Զուլչյանը:

Նույն օրը առաջնորդ Հայր Սուրբը հանդիպումներ ունեցավ Վանաձորի քաղաքապետ Հայրերի հետ, ծանոթացավ եկեղեցուն մտահոգող հարցերին, արեց առաջիկա կարգադրություններ: Սեպուհ վրդ. Զուլչյանը այցելեց նաև Լոռիի մարզպետ Հովհաննես Մատինյանին: Զրույցի ընթացքում քննարկվեց Վանաձորում առաջնորդարան ունենալու անհրաժեշտության խնդիրը: Խոսվեց նաև եկեղեցու քարոզչական գործունեության մասին, այլ հիմնախնդրային հարցերի շուրջ:

Հունիսի 13-ին թեմական առաջնորդը հատուկ նիստի ընթացքում վերակազմավորեց Հաղպատա վանքի աշխատակազմը և ծխական խորհուրդը:

Հունիսի 16-ին Օձունի հինավուրց վանքում Հոգեշնորհ Տ. Սեպուհ վրդ. Զուլչյանի կողմից մատուցվեց սրբազան Պատարագ: Պատարագին ներկա էին Հայաստանի այլ վայրերից և Ս. Էջմիածնից եկած մեծաթիվ ուխտավորներ: Հաջորդ օրը, հունիսի 17-ին, Պատարագ մատուցվեց Հաղարծնի վանքում: Այդ օրը վանքի վանահայր նշանակվեց Տ. Մինաս քհն. Մինասյանը, կարգվեցին նաև երկու սարկավագներ:

Հունիսի 18-ին Դիլիջանում գումարվեց ծխական խորհրդի նիստ, որի ընթացքում քննարկվեցին Տավուշի մարզում գտնվող վանքերի ու եկեղեցիների ներկա վիճակին վերաբերող հարցեր:

Թեմական առաջնորդը եղավ նաև Իջևանի և Նոյեմբերյանի եկեղեցիներում, հանդիպումներ ունեցավ հավատացյալ ժողովրդի հետ:

Տավուշի մարզպետ Պավլիկ Ասատրյանի հետ հանդիպման ընթացքում խոսվեցին մարզի կրոնական կյանքը աշխուժացնելու և եկեղեցու գործունեությանն առնչվող հարցերի շուրջ:

ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄ

Կոտայքի նորահաստատ թեմի առաջնորդ Առաքել վրդ. Քարամյանը իր ծառայության առաջին օրերից շրջագայեց թեմի տարածքում, ծանոթացավ գործող եկեղեցիներին և մյուս սրբատեղիներին:

Հունիսի 13-ին Առաքել Հայր Սուրբը պաշտոնական այցելություն տվեց Կոտայքի մարզպետ պրն. Հովհաննիսյանին: Ջերմ ու անկեղծ զրույցի ընթացքում քննարկվեցին հարցեր ու խնդիրներ՝ մարզի հոգևոր կյանքի հետագա գործունեության առնչությամբ: Հատուկ շեշտվեց Կեչառիսի վանական համալիրի վերանորոգման աշխատանքների շուտափույթ ավարտումը: Մարզպետը և հոգևոր առաջնորդը նշեցին, որ համատեղ ջանքերով լրումին պետք է հասցնեն աստվածահաճո այդ գործը: Զրույցի մաս կազմեց նաև առաջնորդարանի վայրի և շինության հարցը: Պրն. Հովհաննիսյանը իր պատրաստակամությունը հայտնեց այդ նպատակով հատկացնել հատուկ տարածք՝ համապատասխան շենքով:

Հունիսի 14-ին Առաքել վարդապետը հանդիպեց նաև Հրազդանի քաղաքագլուխ պրն. Խաչատրյանի և մարզպետի տեղակալ պրն. Մանուկյանի հետ:

Հանդիպումների ընթացքում քննարկվեցին նորաստեղծ թեմի հիմնախնդիրներին առնչվող հարցեր:

Կիրակի օրը, հունիսի 16-ին, Հրազդանի Ս. Աստվածածին եկեղեցում Հայր Սուրբի կողմից մատուցվեց անդրանիկ առաջնորդական ս. Պատարագ, որի ընթացքում ընթերցվեց Վեհափառ Հայրապետի տնօրինությունը՝ Առաքել վրդ. Քարամյանին Կոտայքի թեմի առաջնորդ նշանակելու մասին:

Հաջորդ կիրակի թեմի առաջնորդը Պատարագ մատուցեց Աբովյան քաղաքի Ս. Ստեփանոս եկեղեցում:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԹԵՄ

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրահանգով Գեղարքունիքի նոր նշանակված հոգևոր առաջնորդ Գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արաբաջյանը հունիսի 17—30-ը ընկած ժամանակահատվածում ծանոթացավ թեմին: Գավառ քաղաքում Սրբազան Հայրը հանդիպեց ծխական խորհրդի անդամների հետ, հանգամանալից զրույց ունեցավ ծխի աշխատանքների վերաբերյալ, կատարեց անհրաժեշտ ձևակերպումներ՝ Արարատյան հայրապետական թեմից Գեղարքունիքի թեմին եկեղեցական իրերի և սրբությունների փոխանցման հետ կապված:

Անանիա եպս. Արաբաջյանը այցելեց Մարտունի քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցի, Հայրավանք, Վարդենիսի եկեղեցի, ծանոթացավ համայնքի անդամների հետ:

Հունիսի 20-ին Սրբազան Հայրը պաշտոնական այցելություն տվեց Գեղարքունիքի մարզպետ պրն. Վլադիմիր Մովսիսյանին: Հանդիպման ընթացքում քննարկվեցին նորաստեղծ թեմի գործունեությանը, նրա տարածքում գտնվող եկեղեցական հուշարձանների վերանորգման ու վերականգնման խնդիրներին առնչվող հարցեր: Պրն. Մովսիսյանը հավաստիացրեց, որ մարզպետարանը կցուցաբերի անհրաժեշտ օգնություն և աջակցություն՝ թեմի կյանքը վերաշխուժացնելու և հիշյալ խնդիրների լուծման կապակցությամբ: Քննարկվեց նաև առաջնորդարան ունենալու հարցը:

Հունիսի 30-ին Գավառի Ս. Աստվածածին եկեղեցում Անանիա եպս. Արաբաջյանը մատուցեց իր անդրանիկ Պատարագը և հավատացյալ ժողովրդին տվեց իր առաջնորդական պատգամը: